



ՀՀ ԱՆ ԶԻԱՀ-ի կանխարգելման
հանրապետական կենտրոն

**ԹՄՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՆԵՐԱՐԿԱՅԻՆ
ՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ, ԿՈՄԵՐՑԻՈՆ
ՍԵՌԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՏՐԱՄԱԴՐՈՂ ԿԱՆԱՆՑ,
ՏՂԱՄԱՐԴՈՒ ՀԵՏ ՍԵՌԱԿԱՆ ԿԱՊԵՐ
ՈՒՆԵՑՈՂ ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ ԵՎ
ՏՐԱՆՍԳԵՆԴԵՐ ԱՆՁԱՆՑ ՇՐՋԱՆՈՒՄ
ՄԻԱՎ ՎԱՐԱԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ԻՆՏԵԳՐՎԱԾ ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ
ՎԱՐՔԱԳԾԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

2018



ԵՐԵՎԱՆ 2018

**ԹՄՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՆԵՐԱՐԿԱՅԻՆ
ՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ, ԿՈՄԵՐՑԻՈՆ ՍԵՌԱԿԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏՐԱՄԱԴՐՈՂ ԿԱՆԱՆՑ,
ՏՂԱՄԱՐԴՈՒ ՀԵՏ ՍԵՌԱԿԱՆ ԿԱՊԵՐ
ՈՒՆԵՑՈՂ ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ ԵՎ
ՏՐԱՆՍԳԵՆԴԵՐ ԱՆՁԱՆՑ ՇՐՋԱՆՈՒՄ
ՄԻԱՎ ՎԱՐԱԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԻՆՏԵԳՐՎԱԾ
ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ՎԱՐՔԱԳԾԱՅԻՆ
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

2018

Սույն հետազոտությունն իրականացվել է ՀՀ առողջապահության նախարարության ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոնի (ՁԻԱՀ-ի ԿՀԿ) կողմից: Հետազոտության ընդհանուր համակարգումը և գիտական ղեկավարումն իրականացրել են ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ի տնօրեն, բ.գ.դ., պրոֆեսոր Սամվել Գրիգորյանը և բ.գ.թ. Ռաֆայել Օհանյանը: Հետազոտությունն իրականացրած հիմնական խմբում ներգրավված են եղել համաճարակաբանական հսկողության բաժնի վարիչ Արշակ Պապոյանը, կանխարգելման բաժնի վարիչ Ժանետա Պետրոսյանը, հոգեբանասոցիալական բաժնի վարիչ Մարինե Ասրյանը, լաբորատոր ախտորոշման բաժնի վարիչ Անահիտ Ասատրյանը, բժշկական օգնության և սպասարկման բաժնի վարիչ Արշակ Ասմարյանը, բժիշկ-վիճակագիրներ Տրդատ Գրիգորյանը, Ռուբեն Հովհաննիսյանը, Տիգրան Հովսեփյանը և Լիլիթ Հովհաննիսյանը, բժիշկ-համաճարակաբաններ Վարդան Արզաքանյանը և Էդուարդ Հովհաննիսյանը, մոնիտորինգի և գնահատման մասնագետ Սեդա Աբգարյանը:

Հետազոտությունն իրականացրած խումբն իր երախտագիտությունն է հայտնում բոլոր նրանց, ովքեր ներգրավված են եղել հետազոտության ընթացքում, այդ թվում հետազոտության մասնակիցներին:

Դաշտային աշխատանքներն իրականացվել են «Դրական մարդկանց հայկական ցանց» սոցիալական հասարակական կազմակերպության կողմից:

Հետազոտությունն իրականացրած խումբն իր հատուկ երախտագիտությունն է հայտնում միջազգային փորձագետ Լիզա Ջոնսթոնին հետազոտության ուղեցույցի մշակման, հետազոտության ընթացքում տրամադրած խորհրդատվության, հետազոտության արդյունքների վերլուծության և սույն զեկույցի պատրաստման համար:

Միջազգային խորհրդատուի ներգրավման համար ֆինանսական աջակցություն տրամադրել է ֆրանսիական «5%» նախաձեռնությունը:

Հետազոտությունն իրականացվել է ՁԻԱՀ-ի, տուբերկուլոզի և մալարիայի դեմ պայքարի գլոբալ հիմնադրամի ֆինանսական աջակցությամբ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ	8
ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ	9
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	11
ՄԻԱՎ/ԶԻԱՀ-ի իրավիճակը Հայաստանի Հանրապետությունում	11
Հետազոտության նպատակներ	13
Մեթոդաբանություն	13
Ընտրանք	13
Ընտրանքի չափը	14
Ֆորմատիվ հետազոտություն	15
Քարտեզավորում	15
Տվյալների հավաքագրման տեղամասերը	16
Հետազոտության մեջ ընդգրկում	16
Լաբորատոր գործընթաց	17
ՄԻԱՎ վարակի, հեպատիտների և սեռավարակների վերաբերյալ հետազոտությունների համար փորձանմուշների հավաքագրում	17
Նմուշների պահպանումը և տեղափոխումը	18
Հետազոտությունների արդյունքների տրամադրման գործընթացը	18
Տվյալների մշակում և վերլուծություն	18
Տվյալների ներկայացում և մեկնաբանում	19
Էթիկական հարցեր	19
Հետազոտության սահմանափակումներ	20
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ	21
1.ԹՄՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՆԵՐԱՐԿԱՅԻՆ ՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐ (ԹՆՕ)	21
Սոցիալ-ժողովրդագրական բնութագրիչներ	23
Տարիքը, կրթությունը և աշխատանքը	23
Ընտանեկան կարգավիճակը	24
Տեղաշարժը	25
Սեռական վարքագիծը	26
Սեռական կյանքի բնութագիր	26
Սեռական վարքագիծը տարբեր զուգընկերների հետ	26
Մշտական զուգընկերներ	26
Պատահական զուգընկերներ	28
Կոմերցիոն զուգընկերներ	29
Ալկոհոլի և թմրամիջոցների գործածումը	30
Ալկոհոլի գործածումը	30
Թմրամիջոցների գործածումը	30
Ներարկային ճանապարհով թմրամիջոցների գործածումը	32
Թմրամիջոցների ներարկմանն առնչվող վարքագիծը	34
Թմրամիջոցներից կախվածության բուժումը և ներարկային ճանապարհով թմրամիջոցների գործածման հետ կապված խնդիրները	36
Խնդիրներ ոստիկանության հետ	38

Խարանի և խտրականության վերաբերյալ հարցեր	38
Ֆիզիկական բռնություն	41
ՄԻԱՎ/ԶԻԱՀ	45
ՄԻԱՎ-ով վարակման վտանգի, գիտելիքների մակարդակի և համոզմունքների գնահատումը.....	45
ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտություն, պահպանականների և միանվագ ներարկիչների տրամադրում	48
ՄԻԱՎ-ի, սիֆիլիսի և հեպատիտ Ց-ի տարածվածությունը	49
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	50
2.ԿՈՄԵՐՑԻՈՆ ՍԵՌԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏՐԱՄԱԴՐՈՂ ԿԱՆԱՅՔ (ԿՍԿ) ..	55
Սոցիալ-ժողովրդագրական բնութագրիչներ	56
Տարիքը, կրթությունը և աշխատանքը.....	56
Ընտանեկան կարգավիճակը	58
Տեղաշարժը	58
Սեռական վարքագիծը.....	59
Սեռական կյանքի բնութագիր և կոմերցիոն սեռական ծառայություններ.....	59
Սեռական վարքագիծը տարբեր զուգընկերների հետ	61
Ոչ կոմերցիոն զուգընկերներ	61
Կոմերցիոն զուգընկերներ	62
Անալ և օրալ սեռական հարաբերություններ	63
Ալկոհոլի և թմրամիջոցների գործածումը	64
Սեռավարակներ.....	65
ՄԻԱՎ/ԶԻԱՀ	66
ՄԻԱՎ-ով վարակման վտանգի, գիտելիքների մակարդակի և համոզմունքների գնահատումը.....	66
ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտություն, պահպանականների տրամադրում	68
Խարանի և խտրականության վերաբերյալ հարցեր	69
Ֆիզիկական բռնություն	72
ՄԻԱՎ-ի, գոնորեայի, տրիխոմոնիազի, քլամիդիոզի և սիֆիլիսի տարածվածությունը	75
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	76
ՀԻՄՆԱԿԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	79
3.ՏՂԱՄԱՐԴՈՒ ՀԵՏ ՍԵՌԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ՏՂԱՄԱՐԴԻԿ (SUS)	80
Սոցիալ-ժողովրդագրական բնութագրիչներ.....	82
Տարիքը, կրթությունը և աշխատանքը.....	82
SUS-ների սոցիալական բնութագրիչները	84
Սեռական նախընտրությունները և ինքնությունը.....	84
Տեղաշարժը	84
Ալկոհոլի և թմրամիջոցների գործածումը	85
Սեռական վարքագիծը.....	86
Սեռական կյանքի բնութագիր.....	86
Լուրբիկանտների օգտագործումը	88
Սեռական վարքագիծը տարբեր զուգընկերների հետ	88

Մշտական զուգընկերներ	88
Պատահական զուգընկերներ	89
Կոմերցիոն զուգընկերներ	91
Իգական սեռի զուգընկերներ.....	93
Խարան և խտրականություն	95
Ֆիզիկական բռնություն	98
ՄԻԱՎ/ՁԻԱՀ	102
ՄԻԱՎ-ով վարակման վտանգի, գիտելիքների մակարդակի և համոզմունքների գնահատումը.....	102
ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտություն, պահպանականների տրամադրում, կանխարգելման ծրագրեր	104
Սեռավարակներ.....	105
ՄԻԱՎ վարակի, սիֆիլիսի և հեպատիտ Բ-ի տարածվածությունը	106
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	107
ՀԻՄՆԱԿԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	110
4.ՏՐԱՆՍԳԵՆԴԵՐ ԱՆՁԻՆՔ (ՏԳ).....	112
Տարիքը, կրթությունը և աշխատանքը.....	112
Ընտանեկան կարգավիճակը	114
ՏԳ-ների սոցիալական բնութագրիչները	114
Սեռական նախընտրությունները և ինքնությունը.....	114
Տեղաշարժը	114
Իգական սեռական հատկանիշներ զարգացնելու համար հորմոններ և պլաստիկ վիրահատություն	115
Պլաստիկ վիրահատություններ.....	116
Սեռական վարքագիծը.....	118
Սեռական կյանքի բնութագիր.....	118
Սեռական վարքագիծը տարբեր զուգընկերների հետ	119
Մշտական զուգընկերներ	119
Պատահական զուգընկերներ	120
Կոմերցիոն զուգընկերներ	121
Իգական սեռի զուգընկերներ.....	122
Լուրբիկանտների օգտագործումը.....	123
Ալկոհոլի և թմրամիջոցների գործածումը	124
Խարան և խտրականություն	125
Ֆիզիկական բռնություն	127
ՄԻԱՎ/ՁԻԱՀ	130
ՄԻԱՎ-ով վարակման վտանգի, գիտելիքների մակարդակի և համոզմունքների գնահատումը.....	130
ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտություն, պահպանականների տրամադրում, կանխարգելման ծրագրեր	132
Սեռավարակներ.....	132
ՄԻԱՎ վարակի, սիֆիլիսի և հեպատիտ Բ-ի տարածվածությունը	133
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	134
ՀԻՄՆԱԿԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	137

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	138
ՀԱՎԵԼՎԱԾ Ա.ԹՆՕ-ՆԵՐԻ, ԿՍԿ-ՆԵՐԻ ԵՎ ՏՍՏ-ՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ 2012, 2014, 2016 և 2018 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՓՈՓՈԽԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ	141
Թմրամիջոցների ներարկային օգտագործողներ	141
Կոմերցիոն սեռական ծառայություններ տրամադրող կանայք.....	143
Տղամարդու հետ սեռական հարաբերություններ ունեցող տղամարդիկ	146
ՀԱՎԵԼՎԱԾ Բ.ԽՄԲԵՐԻ ՉԱՓԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ	148
Գործակիցների հաշվարկումը.....	149
Բազմության իմաստությունը	149
Սոցիալական ցանցերի միջոցով խմբերի չափերի գնահատում.....	149
Քարտեզավորում	149
Արդյունքներ.....	150
ՀԱՎԵԼՎԱԾ Գ.ՄԻԱՍՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ	152
ՀԱՎԵԼՎԱԾ Դ.ՀԱՐՅԱԹԵՐԹԵՐ	153
ԹՆՕ-ՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ ՎԱՐՔԱԳԾԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՀԱՐՅԱԹԵՐԹ	153
ԿՍԿ-ՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ ՎԱՐՔԱԳԾԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՀԱՐՅԱԹԵՐԹ	172
ՏՍՏ-ՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ ՎԱՐՔԱԳԾԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՀԱՐՅԱԹԵՐԹ	188
ՏՐԱՆՍԳԵՆԴԵՐՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ ՎԱՐՔԱԳԾԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՀԱՐՅԱԹԵՐԹ	205

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԱՀԿ	Առողջապահության համաշխարհային կազմակերպություն
ԱՎԵԽ	առավել վտանգի ենթարկվող խմբեր
ԹՆՕ	թմրամիջոցների ներարկային օգտագործող
ԻՖԱ	իմունաֆերմենտային անալիզ
ԿՍԿ	կոմերցիոն սեռական ծառայություններ տրամադրող կին
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՁԻԱՀ	ձեռքբերովի իմունային անբավարարության համախտանիշ
ՁԻԱՀ-ի ԿՀԿ	«ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն
ՄԻԱՎ	մարդու իմունային անբավարարության վիրուս
ՄՀՀ	ՀՀ-ում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլոզի և մալարիայի դեմ ուղղված միջոցառումները համակարգող հանձնաժողով
ՄՄՁԸ	մասնակիցների միջոցով ձևավորվող ընտրանք
ՎՄ	վստահության միջակայք
ՊՇՌ	պոլիմերազային շղթայական ռեակցիա
ՏԳ	տրանսգենդեր
SUS	տղամարդու հետ սեռական կապեր ունեցող տղամարդ


Սույն զեկույցում ներկայացված են 2018թ. ԹՆՕ-ների, ԿՍԿ-ների, SUS-ների և ՏԳ-ների շրջանում ՄԻԱՎ վարակի վերաբերյալ կենսաբանական և վարքագծային հետազոտությունների արդյունքները, նաև այդ խմբերի չափերի նոր գնահատումները և 2012թ., 2014թ., 2016թ. և 2018թ. հետազոտությունների տվյալների հիման վրա կատարված որոշ հիմնական ցուցանիշների միտումների վերլուծությունը: Բացի ՄԻԱՎ վարակի տարածվածության գնահատումից, հետազոտության ընթացքում գնահատվել են նաև հեպատիտ Յ-ի և սիֆիլիսի տարածվածությունը ԹՆՕ-ների շրջանում, սիֆիլիսի, տրիխոմոնիազի, գոնորեայի և քլամիդիոզի տարածվածությունը ԿՍԿ-ների շրջանում, սիֆիլիսի և հեպատիտ Բ-ի տարածվածությունը SUS-ների և ՏԳ-ների շրջանում: Նաև գնահատվել են ռիսկային սեռական վարքագծի առանձնահատկությունները, ալկոհոլի և թմրամիջոցների գործածումը, ՄԻԱՎ վարակի կանխարգելման ծրագրերի ծածկույթը, խարանի և խտրականության դրսևորումները, ՄԻԱՎ վարակի կանխարգելման վերաբերյալ գիտելիքների մակարդակը, ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտությունների ծածկույթը և այլն:

Հետազոտությունները կատարվել են մասնակիցների միջոցով ձևավորվող ընտրանքի (ՄՄՁԸ) մեթոդով: Հետազոտություններն անցկացվել են Երևանում 300-ական ԹՆՕ-ների, ԿՍԿ-ների և SUS-ների և Գյումրիում ու Վանաձորում նշված խմբերի 150-ական ներկայացուցիչների ընդգրկմամբ: ՏԳ-ների շրջանում հետազոտություններն անցկացվել են միայն Երևանում 100 ներկայացուցչի ընդգրկմամբ: Բոլոր մասնակիցներն անցել են սկրինինգ հետազոտության չափանիշներին համապատասխանությունը պարզելու համար, մասնակցել են հարցազրույցի, ինչին հաջորդել է արյան նմուշառումը կենսաբանական հետազոտությունների համար:

ԹՆՕ-ների, ԿՍԿ-ների և SUS-ների շրջանում ՄԻԱՎ վարակի տարածվածությունն ամենաբարձրն է եղել Երևանում: Հետազոտության ընթացքում ՄԻԱՎ վարակի դեպքեր չեն գրանցվել Գյումրիի և Վանաձորի ԿՍԿ-ների շրջանում, սակայն այլ խմբերի համեմատ ԿՍԿ-ների շրջանում սիֆիլիսի տարածվածությունն ամենաբարձրն է եղել բոլոր քաղաքներում: Հետազոտության ընթացքում սիֆիլիսի նկատմամբ դրական արդյունքներ չեն արձանագրվել Գյումրիի և Վանաձորի ԹՆՕ-ների, ինչպես նաև Վանաձորի SUS-ների շրջանում: ԿՍԿ-ների 99,1%-ը հաճախորդների, SUS-ների 78%-ը և ՏԳ-ների 97,5%-ը արական սեռի զուգընկերոջ հետ վերջին սեռական հարաբերության ժամանակ օգտագործել են պահպանակ: ԹՆՕ-ների միայն 40,9%-ն է վերջին սեռական հարաբերության ժամանակ օգտագործել պահպանակ:

Սույն հետազոտության արդյունքները օգտակար տվյալներ են տրամադրում ՀՀ-ում ծրագրերի պլանավորման և ռեսուրսների բաշխման համար:

**ՄԻԱՎ վարակի և սիֆիլիսի տարածվածությունը
ԹՆՕ-ների, ԿՍԿ-ների, SUS-ների և ՏԳ-ների շրջանում**



ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի իրավիճակը Հայաստանի Հանրապետությունում

Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց հաշվարկային թիվը 2017թ. վերջի դրությամբ կազմել է 3400 (1): Թեև մեծահասակ բնակչության շրջանում ՄԻԱՎ-ի տարածվածությունը ցածր է (0,2%), ենթադրվում է, որ այն ավելի բարձր է ՄԻԱՎ-ի նկատմամբ առավել վտանգի ենթարկվող խմբերի՝ թմրամիջոցների ներարկային օգտագործողների (ԹՆՕ), կոմերցիոն սեռական ծառայություններ տրամադրող կանանց (ԿՍԿ), տղամարդու հետ սեռական հարաբերություններ ունեցող տղամարդկանց (SUS) և տրանսգենդերների (ՏԳ) շրջանում:

Փոխանցման հիմնական ուղին հետերոսեքսուալ ճանապարհն է, որը 2017թ. կազմել է արձանագրված դեպքերի 79%-ը: Դրան հաջորդում են թմրամիջոցների ներարկային գործածումը (11%) և հոմոսեքսուալ ճանապարհը (4,8%)(1): Վերջին տարիներին նկատվում է ՄԻԱՎ վարակի արձանագրվող դեպքերի աճ՝ 2012թ. 228 դեպքի համեմատ՝ 358 դեպք 2017թ.:

Հայաստանը որդեգրել է ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի համաճարակի հակազդմանը բազմա- ոլորտային ծրագրային մոտեցում: ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին հակազդումը համակարգվում է երկրում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլոզի և մալարիայի դեմ ուղղված միջոցառումները համակարգող հանձնաժողովի (ՄՀՀ) կողմից, որը ստեղծվել է 2002թ. և վերակազմավորվել է 2011թ.: ՄՀՀ կազմում ընդգրկված են ներկայացուցիչներ պետական, ակադեմիական, տեղական ոչ պետական, միջազգային, կրոնական կազմակերպություններից, ՄԱԿ-ի գործակալություններից, երկկողմ զարգացման գործընկերություններից, մասնավոր ոլորտից, նաև հիվանդություններով ապրող մարդիկ: Կանխարգելման միջոցառումները հիմնականում ուղղված են ծրագրային ծածկույթի և ՄԻԱՎ-ի կանխարգելման հետազոտությունների ընդլայնմանը առավել վտանգի ենթարկվող խմբերի (ԱՎԵԽ) շրջանում (1,2): ՄԻԱՎ վարակի վերաբերյալ կենսաբանական և վարքագծային հետազոտություններ ԹՆՕ-ների, ԿՍԿ-ների և SUS-ների շրջանում ՀՀ-ում անցկացվել են 2010թ., 2012թ., 2014թ., 2016թ. և 2018թ.: Հետազոտությունների ժամանակ կիրառվել է մասնակիցների միջոցով ձևավորվող ընտրանքի (ՄՄՁԸ) մեթոդը: Նշված հետազոտությունների նպատակն էր գնահատել ՄԻԱՎ-ի, այլ վարակների տարածվածությունը, ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտության ծածկույթը, ՄԻԱՎ վարակի կանխարգելման վերաբերյալ գիտելիքների մակարդակը, դիսկային սեռական և թմրամիջոցների գործածման հետ կապված վարքագծերը, նաև կանխարգելման ծրագրերի ծածկույթը:

2018թ. անցկացվել են ՄԻԱՎ վարակի վերաբերյալ կենսաբանական և վարքագծային հետազոտություններ ԹՆՕ-ների, ԿՍԿ-ների և SUS-ների շրջանում

Երևանում (n=300), Գյումրիում (n=150) և Վանաձորում (n=150)՝ օգտագործելով ՄՄՁԸ մեթոդը: Նախորդ տարիներին SUS-ների շրջանում իրականացված հետազոտություններում ներառված են եղել նաև տրանսգենդեր (ՏԳ) անձինք: Սակայն հաշվի առնելով, որ վերջիններիս ռիսկային վարքագիծը տարբերվում է SUS-ներից, և որ ՏԳ-ները հաճախ ձևավորում են սոցիալական ցանցեր՝ Գլոբալ հիմնադրամի կողմից առաջարկվեց անցկացնել SUS-ներից առանձնացված հետազոտություն ՏԳ-ների շրջանում՝ օգտագործելով ՄՄՁԸ մեթոդը: Այդ պատճառով, բացի վերոնշյալ խմբերից, 2018թ. Երևանում անցկացվեց հետազոտություն նաև ՏԳ-ների (n=100) շրջանում: Սույն զեկույցում ներկայացված են այդ հետազոտությունների արդյունքները, նաև ԱՎԵԽ-ների չափերի նոր գնահատումները և 2012թ., 2014թ., 2016թ. և 2018թ. հետազոտությունների տվյալների հիման վրա կատարված որոշ հիմնական ցուցանիշների միտումների վերլուծությունը:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐ

ՄԻԱՎ վարակի վերաբերյալ կենսաբանական և վարքագծային հետազոտությունների հիմնական նպատակն է հետազոտության բոլոր տեղամասերում ԹՆՕ-ների, ԿՍԿ-ների, ՏՍՏ-ների և Երևանում ՏԳ-ների շրջանում գնահատել ՄԻԱՎ-ի տարածվածությունը և ռիսկային վարքագիծը: Հետազոտության նպատակներից է նաև գնահատել ԱՎԵԽ-ների չափերը և որոշել՝

- բոլոր խմբերում կանխարգելման ծրագրերի ծածկույթը, խարանի, խտրականության և բռնության որոշ ցուցանիշներ, ՄԻԱՎ վարակի կանխարգելման վերաբերյալ գիտելիքների մակարդակը, ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտության ծածկույթը, սեռավարակների ախտանշանների առկայությունը,
- ԹՆՕ-ների շրջանում հեպատիտ Ց-ի և սիֆիլիսի տարածվածությունը,
- ԿՍԿ-ների շրջանում սիֆիլիսի, տրիխոմոնիազի, գոնորեայի և քլամիդիոզի տարածվածությունը,
- ՏՍՏ-ների և ՏԳ-ների շրջանում հեպատիտ Բ-ի և սիֆիլիսի տարածվածությունը:

Մեթոդաբանություն

ԹՆՕ-ների, ԿՍԿ-ների, ՏՍՏ-ների շրջանում կենսաբանական և վարքագծային հետազոտություններն իրականացվել են Հայաստանի երեք քաղաքներում՝ Երևանում, Գյումրիում և Վանաձորում, որտեղ բնակվում է երկրի բնակչության 42,2%-ը: ՏԳ-ների շրջանում կենսաբանական և վարքագծային հետազոտություններն իրականացվել են Երևանում:

Ընտրանք

Ընտրանքը ձևավորվել է ՄՄՁԸ մեթոդով: ՄՄՁԸ-ն շղթայական ուղղորդման ընտրանքի տեսակ է՝ մշակված դժվար հասանելի խմբերի ընտրանք ձևավորելու համար: Հետազոտություն իրականացնող անձնակազմը ընդգրկել է թիրախային խմբի բազմազան և լավ ցանց ունեցող անդամների, որոնք ծառայում են որպես սերմեր (հետազոտության սկզբնական մասնակիցներ): Ընդգրկվելուց և հարցմանը մասնակցելուց հետո յուրաքանչյուր սերմի տրվել է հատուկ համարներով մինչև երեք կտրոն՝ խմբի այլ անդամներ ընդգրկելու համար (այսինքն՝ համապատասխան ԹՆՕ-ների, ԿՍԿ-ների, ՏՍՏ-ների և ՏԳ-ների): Կտրոններ ստացած անդամները, որոնք օգտագործել են դրանք, կազմում են մասնակիցների առաջին ալիքը և նույնպես ստանում են հատուկ համարներով կտրոններ, որոնց միջոցով ընդգրկվում են այլ մասնակիցների: Ընտրանքի այս մեթոդը ստեղծում է ընդգրկման հաջորդական

ալիքներ, երկար ընդգրկման շղթաներ և շարունակվում է մինչև ընտրանքի չափի լրանալը:

ՄՄՁԸ տվյալների վերլուծությունը հիմնվում է յուրաքանչյուր մասնակցի սոցիալական ցանցի չափի և ընդգրկման շղթայի վերաբերյալ տեղեկատվության վրա՝ օգտագործելով կտրոնների հատուկ համարները: Հատուկ համարների օգտագործումը վերացնում է անձը բացահայտող տվյալների (անուն, հասցե և այլն) հավաքագրման անհրաժեշտությունը՝ պահպանելով հետազոտության մասնակիցների անանու- նությունը և գաղտնիությունը: Այն նվազեցնում է սխալները, որոնք սովորաբար հանդիպում են շղթայական ուղղորդման այլ մեթոդներում՝ կիրառելով «հավասարը հավասարին» ընդգրկման սահմանափակ համակարգ (մասնակիցները կարող են ընդգրկել մինչև երեք մասնակից՝ նվազեցնելով այն մարդկանց գերներկայաց- վածությունը, որոնք ունեն մեծ ցանցեր):

Ընտրանքի չափը

Ընտրանքի չափը հաշվարկվել է 5% սահմանային սխալով, 95% ՎՄ-ի սահմանում, յուրաքանչյուր խմբի ընտրանքի չափով և պատասխանների բաշխումով՝ օգտագործելով միջինը 60-70%: Օգտագործելով այս միջոցները՝ ո ընտրանքի չափը և E սահմանային սխալը տրվում են.

$$x = Z(c/100) \sqrt{2r(100 - r)}$$

$$n = Nx / ((N - 1)E^2 + x)$$

$$E = \text{Sqrt}[(N - n)x / (n(N - 1))]$$

Որտեղ՝

N-ը խմբի չափն է,

r-ը՝ պատասխանների մասը, որը հետաքրքիր է,

Z(c/100)-ը կրիտիկական արժեքն է c վստահության մակարդակի համար:

Այս հաշվարկների հիման վրա ԹՆՕ-ների, SUS-ների և ԿՍԿ-ների ընտրանքի չափը Երևանում եղել է 300-ական: Վանաձորում և Գյումրիում ընտրանքի չափն ավելացվել է 2016թ. 100-ից՝ 150-ի 2018թ.: ՏԳ-ների շրջանում ընտրանքի չափը սկզբնապես սահմանվել է 50՝ հաշվի առնելով Երևանում խմբի չափի վերաբերյալ առկա տեղեկատվությունը, սակայն հետագայում այն կրկնապատկվել է և սահմանվել 100:

Աղյուսակ 1. *ՄԻԱՎ վարակի վերաբերյալ կենսաբանական և վարքագծային հետազոտություններում ընդգրկված խմբերի ընտրանքի չափը՝ ըստ քաղաքների*

ԽՈՒՄԲ	ԵՐԵՎԱՆ (N)	ԳՅՈՒՄՐԻ (N)	ՎԱՆԱՁՈՐ (N)
ԹՆՕ	300	150	150
ԿՍԿ	300	150	150
SUS	300	150	150
SԳ	100	--	--

Ֆորմատիվ հետազոտություն

Մինչ SԳ-ների շրջանում կենսաբանական և վարքագծային հետազոտությունն սկսելը անցկացվել է ֆորմատիվ հետազոտություն ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոնի կողմից՝ գնահատելու ընտրանքի ձևավորման հնարավորությունը: Արդյունքում պարզվել է, որ SԳ-ների թիվը բավականաչափ փոքր է Գյումրիում և Վանաձորում ընտրանք ձևավորելու համար: Երևանում կայացել են հանդիպումներ SԳ-ների շրջանում աշխատանքներ իրականացնող տարբեր կազմակերպությունների մասնակցությամբ («Իրավունքի կողմ», «Հանուն հզոր ապագայի», «ՔԱԼՐ ՖՈՒԼ ՀԱՌԻՍ», «Նոր սերունդ»)՝ պարզաբանելու նախատեսվող հետազոտությունների իրականացումն ու քարտեզավորումը, նաև քննարկելու հետազոտություններում նշված ՀԿ-ների՝ SԳ համայնքի ներկայացուցիչների ընդգրկման հարցերը: Հանդիպումների արդյունքում որոշվել է նշված ՀԿ-ների անդամներից ձևավորել դաշտային աշխատանքներ իրականացնող անձնակազմ և խրախուսել՝ անցկացնելու մոնիտորինգ տվյալների հավաքագրման ընթացքում: Մեկ խումբը («Իրավունքի կողմ»), որն այլ խմբերի հետ ուներ անհամատեղելի տարաձայնություններ, հրաժարվեց մասնակցել հետազոտությանը:

Քարտեզավորում

Քարտեզավորումն իրականացվել է SԳ համայնքի անդամների ներգրավմամբ խմբի ներկայացուցիչների գտնվելու վայրերը որոշակիացնելու և այդ վայրերում խմբի չափի վերաբերյալ տվյալների հավաքագրման նպատակով: Շահագրգիռ կողմերի մասնակցությամբ անցկացվել է աշխատանքային հանդիպում մեթոդաբանությունը նկարագրելու և լրացման եթակա ձևաթղթերը ներկայացնելու համար: Քարտեզավորումն անցկացվել է մինչև SԳ-ների շրջանում կենսաբանական և վարքագծային հետազոտություններն սկսելը մեկ շաբաթվա ընթացքում:

Տվյալների հավաքագրման տեղամասերը

ԹՆՕ-ները, ԿՍԿ-ները, ՏՍՏ-ները ընտրվել են Հայաստանի երեք մեծ քաղաքներից՝ Երևան (բնակչությունը՝ 1,077,600), Գյումրի (բնակչությունը՝ 114,000) և Վանաձոր (բնակչությունը՝ 79,000) (գծապատկեր 1): ՏԳ-ներն ընտրվել են Երևանից:

Գծապատկեր 1. Հայաստանի քարտեզը



Մայրաքաղաք Երևանը Հայաստանի ամենամեծ քաղաքն է, համարվում է երկրի մշակութային, վարչական և արդյունաբերական կենտրոնը: Գյումրին, որը գտնվում է մայրաքաղաքից հյուսիս, իր մեծությամբ Հայաստանի երկրորդ քաղաքն է: Վանաձորը Հայաստանի երրորդ խոշոր քաղաքն է, Լոռու մարզի մարզկենտրոնը, գտնվում է երկրի հյուսիսային մասում:

Հետազոտության մեջ ընդգրկում

ԹՆՕ-ների, ԿՍԿ-ների, ՏՍՏ-ների շրջանում հետազոտությունը սկսվել է չորս սերմով, Գյումրիում և Վանաձորում՝ երկուական սերմերի միջոցով: Երևանում ՏԳ-ների շրջանում հետազոտությունը սկսվել է երկու սերմով: Սերմերը ստացել են հատուկ համարներով կտրոններ՝ ընդգրկելու իրենց սոցիալական ցանցի բազմազան անդամներ: Հետազոտության տեղամաս գալուց հետո վավերական կտրոն ունեցող մասնակիցներն անցել են սկրինինգ և տվել տեղեկացված համաձայնություն

հետազոտության մեջ ընդգրկվելու համար: Սկրինինգ անցած և հետազոտության մեջ ընդգրկված մասնակցի հետ հարցազրուցավարն անցկացրել է հարցազրույց, որից հետո մասնակիցը ստացել է նախաթեստային խորհրդատվություն և հանձնել արյուն ՄԻԱՎ-ի և այլ վարակների վերաբերյալ լաբորատոր հետազոտության համար: Արյան նմուշառումից հետո յուրաքանչյուր մասնակից ստացել է որոշակի թվով կտրոններ (երեքից ոչ ավելի) և ստացել համապատասխան տեղեկատվություն հետազոտության մեջ հավասարակիցներին ընդգրկելու վերաբերյալ: Գաղտնիությունն ապահովելու նպատակով վարքագծային և կենսաբանական տվյալները կապելու և ընդգրկման շղթային հետևելու համար օգտագործվել են հատուկ համարներ:

Հետազոտության մասնակիցներն ստացել են 4000 դրամի չափով առաջնային խրախուսում հետազոտությանը մասնակցելու համար և լրացուցիչ երկրորդային խրախուսում (առավելագույնը երեք) յուրաքանչյուր անձի համար, որն ընդգրկվել և մասնակցել է հետազոտությանը:

Լաբորատոր գործընթաց

ՄԻԱՎ վարակի, հեպատիտների և սեռավարակների վերաբերյալ հետազոտությունների համար փորձանմուշների հավաքագրում

ՄԻԱՎ վարակի վերաբերյալ կենսաբանական հետազոտությունների համար փորձանմուշները հավաքագրվել են դաշտային աշխատանքների իրականացման տեղամասերում: Նմուշները կոդավորվել են, բոլոր տվյալները և լրացված ձևերը կապակցվել են կտրոնների համարների հետ:

Յուրաքանչյուր մասնակցից վերցվել է 5մլ արյուն:

ՄԻԱՎ-ի, հեպատիտ Բ-ի և հեպատիտ Ց-ի, սիֆիլիսի վերաբերյալ հետազոտություններն իրականացվել են հետազոտության տեղամասում արագ թեստավորման մեթոդով:

Տեղամասում արագ թեստի նախնական ՄԻԱՎ դրական արդյունքի դեպքում դաշտային աշխատանք իրականացնողը մասնակցին ուղեկցել է ՁԻԱՀ-ի ԿՀԿ՝ ՄԻԱՎ-ի վերաբերյալ երկրորդ հետազոտության համար, որը կատարվել է ԻՖԱ մեթոդով 4-րդ սերնդի Ag-Ab թեստ-հավաքածուով: ԻՖԱ մեթոդով հետազոտության դրական արդյունքի դեպքում ՄԻԱՎ վարակի ախտորոշման նպատակով կատարվել է հետազոտություն NEW LAV-BLOT1 թեստ-հավաքածուով: Ախտորոշում ստացած մասնակիցն անմիջապես ուղղորդվել է ստանալու անհրաժեշտ բուժում և խնամք:

ՄԻԱՎ-ի վերաբերյալ լաբորատոր հետազոտությունների որակը վերահսկելու նպատակով բացասական արդյունքով պատահականորեն ընտրված նմուշների 10%-ը կրկնակի հետազոտվել է ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ի լաբորատորիայում:

Հեպատիտ Բ-ի վերաբերյալ արագ թեստի նախնական դրական արդյունքի դեպքում հետազոտությունը շարունակվել է ԻՖԱ մեթոդով HBsAg թեստ-հավաքածուներով:

Հեպատիտ Ց-ի վերաբերյալ արագ թեստի նախնական դրական արդյունքի դեպքում հետազոտությունը շարունակվել է Anti-HCV ԻՖԱ թեստ-հավաքածուներով:

Սիֆիլիսի վերաբերյալ արագ թեստի նախնական դրական արդյունքի դեպքում հետազոտությունը շարունակվել է TPHA թեստով:

Տրիխոմոնիազի, գոնորեայի և քլամիդիոզի վերաբերյալ հետազոտությունները կատարվել են ՊՇՌ մեթոդով:

Նմուշների պահպանումը և տեղափոխումը

Հետազոտության տեղամասերում արյան նմուշները պահվել են 2-8°C-ում, իսկ մյուս նմուշները՝ հեշտոցային քսուքները, պահվել են տեղամասում 18-25°C-ում մինչև լաբորատոր հետազոտության համար ՁԻԱՀ-ի ԿՀԿ տեղափոխելը: Բոլոր նմուշները տեղափոխվել են ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ի կողմից տրամադրված պայուսակ-սառնարաններով (2-8°C) դրանց հավաքագրումից 24-48 ժամվա ընթացքում՝ համաձայն ՀՀ առողջապահության նախարարի 2017 թվականի օգոստոսի 4-ի թիվ 2412-Ա հրամանով հաստատված «ՄԻԱՎ վարակի վերաբերյալ հետազոտության և խորհրդատվության, լաբորատոր ախտորոշման» կլինիկական ուղեցույցի:

Հետազոտությունների արդյունքների տրամադրման գործընթացը

Հետազոտությունների արդյունքները կապակցվել են՝ օգտագործելով մասնակիցների կտրոնների հատուկ համարները, լաբորատոր համարները և նմուշների հավաքագրման ամսաթիվը: Հետազոտությունները կատարվել են ամեն օր արդյունքները հնարավորինս շուտ տրամադրելու նպատակով: ՄԻԱՎ-ի վերաբերյալ արագ թեստավորման արդյունքները մասնակիցներին տրամադրվել են խորհրդատուի կողմից նույն օրը: Դրական արդյունքով մասնակիցները ստացել են ուղղորդման կտրոն և ուղեկցվել են անձնակազմի անդամի կողմից ՁԻԱՀ-ի ԿՀԿ հետագա հետազոտությունների համար:

Տվյալների մշակում և վերլուծություն

Տվյալները կրկնակի մուտքագրվել, համեմատվել, անհամապատասխանությունների դեպքում ուղղվել, մաքրվել և կոդավորվել են: Որակի ապահովման պատասխանատուն եղել է ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ն, որը մշտապես հետևել է տվյալների հավաքագրմանը՝ կտրոնների սխալ համարները, համընկնումները և այլ սխալներ ժամանակին հայտնաբերելու համար: Հայտնաբերված խնդիրները ներկայացվել են համապատասխան տեղամասի համակարգողին անմիջապես ուղղելու համար:

Տեղամասին հատուկ և ամբողջ խմբի ունիվարիատ/բիվարիատ վերլուծություններ են կատարվել՝ օգտագործելով հաջորդական ընտրանքային չափման գործակիցը RDS Analyst ծրագրում (www.hpmrg.org): Յուրաքանչյուր ընտրանքի ընդգրկման շղթաների գծապատկերները կազմվել են՝ օգտագործելով NETDRAW in UCINET 2.15 for Windows (<http://analytictech.com/ucinet/download.htm>): Կատարվել է նաև հիմնական ցուցանիշների միտումների վերլուծություն 2012թ., 2014թ., 2016թ. և 2018թ. անցկացված հետազոտությունների հիման վրա: Հայտնաբերված նշանակալի տարբերությունները վերլուծվել են՝ օգտագործելով Cochran-Armitage միտումների վերլուծության թեստը. $P < 0,05$ (հավելված Ա):

Տվյալների ներկայացում և մեկնաբանում

Տվյալները ներկայացված են աղյուսակների կամ գծապատկերների տեսքով: Որտեղ հնարավոր է, ներկայացված են չափը (n), հաշվարկված թվերը և 95% վստահության միջակայքերը (ՎՄ): Ընտրանքների միջև/մեջ վիճակագրորեն նշանակալի տարբերությունները գնահատվել են՝ նշելով ՎՄ-ի համընկնումները: Հիմնական ցուցանիշների միտումների վերլուծությունը ներկայացված է հավելված Ա-ում: Խմբերի չափերի գնահատումները ներկայացված են հավելված Բ-ում:

Էթիկական հարցեր

Հետազոտության մասնակիցները տեղեկացվել են, որ մասնակցությունը կամավոր է, գաղտնիությունը՝ երաշխավորված, և իրենց ցանկությամբ կարող է դադարեցվել հետազոտության ցանկացած փուլում: Հետազոտության մանրամասն նկարագրությունից հետո բոլոր ընդգրկվողներից ստացվել է գրավոր տեղեկացված համաձայնություն: Նրանք նաև տեղեկացվել են, որ խրախուսում ստանալու համար պետք է մասնակցեն հետազոտության վարքագծային և կենսաբանական մասերին: Յուրաքանչյուր տեղամասում հետազոտության մասնակիցներին տրամադրվել են կոնտակտային տվյալներ հետազոտությանն առնչվող հարցերի դեպքում կապ հաստատելու համար: Մասնակիցները նաև տեղեկացվել են, թե ցանկության դեպքում երբ և որտեղ կարող են ստանալ իրենց հետազոտության արդյունքները:

Հարցազրույցները, նախա- և հետթեստային խորհրդատվությունը, ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտությունը, հետազոտությունների արդյունքների տրամադրումը կատարվել են գաղտնիությունն ապահովող պայմաններում: Հետազոտության բոլոր տվյալների պահպանումը կազմակերպվել է պատշաճ ձևով, անձը բացահայտող տվյալներ չեն ներառվել հարցաշարերում և արյան նմուշառման ժամանակ լրացվող ձևաթղթերում: Հարցաշարերը, կենսաբանական նմուշները և արդյունքները կապակցվել են՝ օգտագործելով մասնակցի կտրոնի հատուկ համարը և լաբորատոր

համարը: ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ի էթիկայի կոմիտեն հավանություն է տվել ՄԻԱՎ վարակի վերաբերյալ կենսաբանական և վարքագծային հետազոտությունների փաստաթղթերի փաթեթին:


Հետազոտության սահմանափակումներ

Թեև ներկայացված հաշվարկված թվերը կարող են ներկայացուցչական համարվել խմբի համար, սակայն ցանցը կարող է չպարունակել կարևոր ենթախմբեր: Օրինակ, ԹՆՕ-ների խմբում չափազանց քիչ են եղել կանայք: Հնարավոր է, որ ներարկային թմրամիջոցներ գործածող կանայք ցանցային կապեր չունեն և ունեն փոքր, փակ ցանցեր ներարկային թմրամիջոցներ գործածող տղամարդկանց հետ (այսինքն՝ ընկերներ, ամուսիններ կամ զուգընկերներ, որոնք գործածում են թմրամիջոցներ իրենց իգական սեռի զուգընկերների հետ): Հաշվի առնելով, որ իգական սեռի ներկայացուցիչները կազմում են ընտրանքի փոքր մաս, հետազոտության արդյունքները պետք է մեկնաբանվեն որպես ներկայացուցչական միայն արական սեռի ԹՆՕ-ների համար: Որոշ դեպքերում ՎՄ-ի սահմանները շատ լայն են ստույգ մեկնաբանություններ տալու համար: RDS-Analyst ծրագրում վերլուծությունը կախված է ընդգրկման շղթաների ինտեգրվածությունից, ուստի բաց թողնված արժեքները կարող են անդրադառնալ կշռված թվերի մասնաբաժնի վրա:


1. ԹՄՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՆԵՐԱՐԿԱՅԻՆ ՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐ (ԹՆՕ)

ՄԻԱՎ վարակի վերաբերյալ կենսաբանական և վարքագծային հետազոտությունների մեջ ընդգրկվել է Երևանում 300 ԹՆՕ (այդ թվում չորս սերմ), Գյումրիում և Վանաձորում՝ 150-ական ԹՆՕ (այդ թվում երկուական սերմ յուրաքանչյուր քաղաքում): Ընդգրկման շղթաներում ալիքների առավելագույն թիվը Երևանում հասել է 9-ի (գծապատկեր 1.1.), Գյումրիում (գծապատկեր 1.2.) և Վանաձորում՝ 11-ի (գծապատկեր 1.3.): Ընդգրկման գրաֆիկներում սերմերը գտնվում են շղթաների գագաթին:


Գծապատկեր 1.1. *ԹՆՕ-ների ընտրանքի ընդգրկման գրաֆիկը ընդգրկման չորս շղթայով ($n=300$), ք.Երևան*



Գծապատկեր 1.2. ԹՆՕ-ների ընտրանքի ընդգրկման գրաֆիկը ընդգրկման երկու շղթայով ($n=150$), ք. Գյումրի



Գծապատկեր 1.3. ԹՆՕ-ների ընտրանքի ընդգրկման գրաֆիկը ընդգրկման երկու շղթայով ($n=150$), ք. Վանաձոր



Սոցիալ-ժողովրդագրական բնութագրիչներ

Տարիքը, կրթությունը և աշխատանքը


ԹՆՕ-ների մեծ մասը բոլոր երեք քաղաքներում 25 տարեկան և ավելի բարձր տարիքի արական սեռի (98% և ավելի) ներկայացուցիչ է՝ ծնված ՀՀ-ում (95% և ավելի) (աղյուսակ 1.1.): Հաշվի առնելով, որ ընտրանքում իգական սեռի ներկայացուցիչները քիչ են, արդյունքները ներկայացուցչական են միայն արական սեռի ԹՆՕ-ների համար: Տարիքի մեդիանան Երևանում 44 է (սահմաններ՝ 18-68), Գյումրիում՝ 47 (սահմաններ՝ 19-68), և Վանաձորում՝ 48,2 (սահմաններ՝ 28-59): Մեծամասնությունն ուներ հիմնական կրթություն, իսկ Գյումրիում՝ միջնակարգ:

Աղյուսակ 1.1. ԹՆՕ-ների տարիքը, սեռը, ծննդավայրը և կրթությունը

	ԵՐԵՎԱՆ N = 300		ԳՅՈՒՄՐԻ N = 150		ՎԱՆԱՁՈՐ N = 150	
	N	% (95% ՎՄ)	N	% (95% ՎՄ)	N	% (95% ՎՄ)
ՏԱՐԻՔԸ						
24-ից 34-ը	6	1,8 (0,3, 3,3)	8	6,0 (2,5, 9,4)	0	--
25 - 34	49	13,7 (9,2, 18,3)	45	34,5 (28,3, 40,7)	10	6,6 (3,7, 9,4)
35 - 44	107	35,5 (28,8, 42,2)	16	10,7 (6,6, 14,7)	52	40,7 (32,4, 49,4)
45 և ավելի	138	49,0 (41,5, 56,0)	81	48,8 (42,2, 55,4)	79	52,7 (44,1, 60,9)
ՏԱՐԻՔԱՅԻՆ ԽՈՒՄԸ						
<25	6	1,8 (0,3, 3,3)	8	6,0 (2,5, 9,6)	0	--
≥25	294	98,2 (96,7, 99,8)	142	94,0 (90,4, 97,5)	141	100
ՍԵՌԸ						
ԱՐԱԿԱՆ	291	97,8 (96,0, 99,5)	150	100	150	100
ԻԳԱԿԱՆ	9	2,2 (0,4, 4,0)	0	--	0	--
ԾՆՆԴԱՎԱՅՐԸ						
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ	295	98,4 (97,2, 99,7)	143	95,0 (92,1, 97,9)	149	100
ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅՈՒՆ	2	0,6 (0,0, 1,4)	2	1,2 (0,0, 2,7)	0	--
ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ	2	0,5 (0,0, 1,0)	4	3,1 (0,5, 5,6)	0	--
ԱՅԼ	1	0,4 (0,0, 1,3)	1	0,6 (0,0, 1,4)	0	--
ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՅՈՂՆԵՐ	299	99,5 (98,7, 100)	150	100	150	100
ԿՐԹՈՒԹՅՈՒՆ						
ՀԻՄՆԱԿԱՆ	156	50,3 (43,0, 57,7)	1	0,6 (0,0, 1,6)	107	72,7 (65,6, 79,6)
ՄԻՋՆԱԿԱՐԳ	48	14,2 (9,3, 19,1)	88	60,0 (51,8, 68,2)	10	7,3 (2,9, 11,7)
ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ	55	20,4 (14,0, 26,8)	39	25,3 (18,8, 31,8)	13	7,6 (4,1, 11,1)
ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ	40	15,1 (9,2, 20,8)	22	14,1 (9,3, 18,8)	20	12,3 (7,7, 12,3)

Երևանում ԹՆՕ-ների 13%-ը, Գյումրիում մոտ 22%-ը, Վանաձորում 56%-ը նշել են, որ չունեն եկամտի որևէ աղբյուր: Եկամտի աղբյուր ունեցողների մեծամասնությունը որպես այդպիսին նշել է աշխատանքը, կենսաթոշակը կամ արտաքին օգնությունը (գծապատկեր 1.4.):

Գծապատկեր 1.4. ԹՆՕ-ների եկամտի աղբյուրները



Ընտանեկան կարգավիճակը

Երևանում ԹՆՕ-ների 56%-ը, Վանաձորում 63%-ը և Գյումրիում միայն 28%-ն էին ամուսնացած: Մեծամասնությունն ապրում է զուգընկերոջ հետ (աղյուսակ 1.2.):

Աղյուսակ 1.2. ԹՆՕ-ների ընտանեկան կարգավիճակը

	ԵՐԵՎԱՆ N = 300		ԳՅՈՒՄՐԻ N = 150		ՎԱՆԱԶՈՐ N = 150	
	N	% (95% ՎՄ)	N	% (95% ՎՄ)	N	% (95% ՎՄ)
ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ						
ԱՄՈՒՐԻ	50	15,8 (10,6, 20,9)	36	27,7 (21,6, 33,8)	11	10,3 (3,4, 17,3)
ԱՄՈՒՍՆԱՑԱԾ	172	56,4 (48,8, 63,9)	71	45,9 (38,2, 53,6)	100	63,1 (54,4, 71,6)
ԱՄՈՒՍՆԱԼՈՒԾՎԱԾ	67	24,7 (17,7, 31,6)	31	19,0 (13,1, 24,9)	37	25,4 (17,7, 33,0)
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՄՈՒՍՆՈՒԹՅՈՒՆ	6	1,6 (0,2, 3,1)	9	58,1 (2,9, 8,7)	2	1,2 (0,0, 2,4)
ԱՅՐԻ	5	1,5 (0,1, 2,9)	3	1,6 (0,2, 2,9)	0	—

	ԵՐԵՎԱՆ N = 300		ԳՅՈՒՄՐԻ N = 150		ՎԱՆԱԶՈՐ N = 150	
	N	% (95% ՎՄ)	N	% (95% ՎՄ)	N	% (95% ՎՄ)
ԶՈՒԳԸՆԿԵՐՈՋ ՀԵՏ ԱՊՐՈՂՆԵՐ						
	226	76,2 (69,5, 82,8)	108	72,6 (65,0, 80,2)	112	73,8 (67,0, 80,3)

Տեղաշարժը

Բոլոր քաղաքներում ԹՆՕ-ների մեծ մասը վերջին տարվա ընթացքում տնից չէր բացակայել ավելի քան մեկ ամիս (աղյուսակ 1.3.): Տնից բացակայած ԹՆՕ-ների մեծամասնությունը եղել էր Ռուսաստանի Դաշնությունում (ՌԴ): Երևանի՝ տնից բացակայած ԹՆՕ-ների 49%-ը, Վանաձորի ԹՆՕ-ների 69%-ը և Գյումրիի ԹՆՕ-ների 37%-ը ունեցել են սեռական հարաբերություն առանց պահպանակի: Երևանում ԹՆՕ-ների 59%-ը, Գյումրիում 67%-ը և Վանաձորում 61%-ը նշել են տնից մեկ ամսից ավելի բացակայելու ընթացքում ուրիշի ներարկիչով թմրամիջոցներ գործածելու մասին: Տնից 3 ամիս և ավելի բացակայած ԹՆՕ-ների 39%-ը Երևանում, 25%-ը Գյումրիում և 23%-ը Վանաձորում որպես բացակայության պատճառ նշել են արտագնա աշխատանքի մեկնելը:

Աղյուսակ 1.3. ԹՆՕ-ների տեղաշարժը

	ԵՐԵՎԱՆ N = 300		ԳՅՈՒՄՐԻ N = 150		ՎԱՆԱԶՈՐ N = 150	
	N	% (95% ՎՄ)	N	% (95% ՎՄ)	N	% (95% ՎՄ)
ՎԵՐՋԻՆ ՄԵԿ ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՎԵԼԻ ՔԱՆ ՄԵԿ ԱՄԻՍ ՏՆԻՑ ԲԱՑԱԿԱՅԱԾ ԹՆՕ-ՆԵՐԻ ԹԻՎԸ						
	64	22,3 (16,5, 28,1)	28	19,0 (13,8, 24,2)	9	7,7 (2,1, 13,2)
ՎԵՐՋԻՆ ՄԵԿ ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՏՆԻՑ ԱՎԵԼԻ ՔԱՆ ՄԵԿ ԱՄԻՍ ԲԱՑԱԿԱՅԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ ԳՏՆՎԵԼՈՒ ԵՐԿԻՐԸ						
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՅԼ ՄԱՐԶԵՐ	9	12,0 (3,0, 20,7)	12	44,8^	3	18,7 (0, 54,3)
ՌՈՒՍԱՍՏԱՆ	43	66,0 (52,5, 79,3)	12	41,2^	6	81,3 (45,7, 100)
ՈՒԿՐԱԻՆԱ	0	--	3	13,3^	0	--
ԱՅԼ	12	22,1 (9,9, 34,5)	0	--	0	--
ԱՌԱՆՑ ՊԱՀՊԱՆԱԿԻ ՍԵՌԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՐՋԻՆ ՄԵԿ ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ, ՏՆԻՑ ԱՎԵԼԻ ՔԱՆ ՄԵԿ ԱՄԻՍ ԲԱՑԱԿԱՅԵԼՈՒ ԸՆԹԱՑՔՈՒՄ						
	28	49,5 (34,6, 64,8)	10	37,0^	4	68,6 (33,9, 100)
ՈՒՐԻՇԻ ՆԵՐԱՐԿԻՉՈՎ ԹՄՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՆԵՐԱՐԿԱՅԻՆ ԳՈՐԾԱԾՈՒՄ ՎԵՐՋԻՆ ՄԵԿ ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՏՆԻՑ ԱՎԵԼԻ ՔԱՆ ՄԵԿ ԱՄԻՍ ԲԱՑԱԿԱՅԵԼՈՒ ԸՆԹԱՑՔՈՒՄ						
	36	58,8 (45,1, 72,6)	19	67,4 (54,3, 80,5)	5	60,7 (26,2, 98,5)
ՎԵՐՋԻՆ ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՇԽԱՏԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ 3 ԿԱՍ ԱՎԵԼԻ ԱՄԻՍ, ԲԱՅՑ ՈՉ ԱՎԵԼԻ, ՔԱՆ 12 ԱՄԻՍ ԱՐՏԵՐԿԻՐ ՄԵԿՆԱԾՆԵՐ						
	27	39,4 (26,5, 52,1)	8	24,6 (12,3, 35,2)	3	22,7 (3,0, 38,0)

^Արժեքների թիվը ցածր է վստահության միջակայքեր ստանալու համար:

Սեռական վարքագիծը

Սեռական կյանքի բնութագիր

Բոլոր ԹՆՕ-ները երեք քաղաքներում նշել են երբևէ սեռական հարաբերություն ունենալու մասին, ըստ որում մեծամասնությունն առաջին անգամ սեռական հարաբերություն է ունեցել 16-19 տարեկանում (աղյուսակ 1.4.): Առաջին սեռական հարաբերության ժամանակ տարիքի մեդիանան կազմել է Երևանում 16 (սահմաններ՝ 12-25), Գյումրիում՝ 19 (սահմաններ 16-23), և Վանաձորում՝ 17 (սահմաններ՝ 13-23): ԹՆՕ-ների մեծ մասը վերջին տարվա ընթացքում ունեցել է 2-5 զուգընկեր: Կեսից ավելին սեռական հարաբերություններ է ունեցել վերջին ամսվա ընթացքում, որոնցից վերջին սեռական հարաբերության ժամանակ պահպանակ են օգտագործել Երևանի ԹՆՕ-ների 41%-ը, Գյումրիի ԹՆՕ-ների 72%-ը և Վանաձորի ԹՆՕ-ների ընդամենը 29%-ը:

Աղյուսակ 1.4. ԹՆՕ-ների սեռական կյանքի բնութագիր

	ԵՐԵՎԱՆ N = 300		ԳՅՈՒՄՐԻ N = 150		ՎԱՆԱՁՈՐ N = 150	
	N	% (95% ՎՄ)	N	% (95% ՎՄ)	N	% (95% ՎՄ)
ՏԱՐԻՔԸ ՍԵՌԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ						
15 և ՑԱԾՐ	96	34,3 (27,1, 41,6)	0	—	8	4,7 (2,0, 7,4)
16 - 19	163	53,8 (46,5, 61,0)	103	68,7 (62,6, 75,0)	130	84,5 (78,4, 90,7)
20 և ԱՎԵԼԻ	40	11,9 (7,8, 16,0)	47	31,3 (25,0, 37,4)	12	10,8 (5,3, 16,2)
ԶՈՒԳԸՆԿԵՐՆԵՐԻ ԹԻՎԸ ՎԵՐՋԻՆ ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ						
1	82	32,4 (25,2, 39,5)	20	18,0 (6,9, 14,7)	47	28,6 (21,7, 35,4)
2 - 5	154	53,9 (46,3, 61,4)	74	49,2 (42,0, 56,5)	92	60,9 (52,7, 69,5)
6 և ԱՎԵԼԻ	50	13,7 (9,2, 18,1)	55	40,0 (32,5, 47,3)	10	10,5 (3,5, 17,2)
ՍԵՌԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՐՋԻՆ ԱՄՍՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ						
	234	77,6 (71,4, 83,9)	139	93,5 (90,5, 96,5)	98	58,0 (48,9, 67,4)
ՎԵՐՋԻՆ ՍԵՌԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ ՊԱՀՊԱՆԱԿԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ						
	95	40,9 (32,5, 49,3)	95	72,3 (65,9, 78,9)	25	29,1 (16,8, 42,4)

Սեռական վարքագիծը տարբեր զուգընկերների հետ

Մշտական զուգընկերներ

ԹՆՕ-ների մեծ մասը նշել է, որ ունեցել է մշտական զուգընկեր: Մեկ տարվա ընթացքում մշտական զուգընկերների թվի մեդիանան 1 է (առավելագույնը՝ 6՝ Երևանում և Գյումրիում, և 2՝ Վանաձորում): Մեկ տարվա ընթացքում մշտական զուգընկերների հետ ունեցած սեռական հարաբերությունների թվի մեդիանան 94 է Երևանում (առավելագույնը՝ 360), 55՝ Գյումրիում (առավելագույնը 150) և 25՝ Վանաձորում (առավելագույնը՝ 150): Մշտական զուգընկերների հետ երբեք պահպա-


նակ չօգտագործած ԹՆՕ-ների տոկոսը ամենաբարձրն է եղել Վանաձորում (69%), որին հաջորդում են Երևանը (59%) և Գյումրին (45%) (աղյուսակ 1.5.):

Աղյուսակ 1.5. *Մեռական վարքագիծը մշտական զուգընկերների հետ*

	ԵՐԵՎԱՆ N = 300		ԳՅՈՒՄՐԻ N = 150		ՎԱՆԱԶՈՐ N = 150	
	N	% (95% ՎՄ)	N	% (95% ՎՄ)	N	% (95% ՎՄ)
ՄՇՏԱԿԱՆ ԶՈՒԳԸՆԿԵՐՆԵՐ ՎԵՐՋԻՆ ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ						
	256	86,2 (81,3, 91,0)	129	77,0 (69,8, 84,2)	117	74,9 (67,5, 82,2)
ՊԱՀՊԱՆԱԿՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՄՇՏԱԿԱՆ ԶՈՒԳԸՆԿԵՐՆԵՐԻ ՀԵՏ ՎԵՐՋԻՆ ՄԵԿ ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ						
ՄԻՇՏ	64	23,5 (17,1, 29,9)	21	19,3 (11,7, 27,0)	23	23,6 (15,8, 32,1)
ԵՐԲԵՄՆ	47	17,0 (11,6, 22,4)	42	35,3 (27,0, 43,7)	5	7,5 (0,0, 16,1)
ԵՐԲԵՔ	145	59,5 (52,3, 66,7)	55	45,4 (37,5, 53,1)	52	68,8 (56,9, 79,3)

Որպես մշտապես պահպանակ չօգտագործելու պատճառ հարցման ենթարկվածների մեծամասնությունը Երևանում, Գյումրիում և Վանաձորում նշել է զուգընկերոջ հանդեպ վստահությունը (գծապատկեր 1.5.):

Գծապատկեր 1.5. *Մշտական զուգընկերների հետ վերջին մեկ տարվա ընթացքում պահպանակ չօգտագործելու պատճառները*



Պատահական զուգընկերներ


ԹՆՕ-ների կեսից ավելին Երևանում, 83%-ը Գյումրիում և 64%-ը Վանաձորում նշել են պատահական զուգընկերներ ունենալու մասին, որոնց մեծամասնությունն օգտագործել է պահպանակ վերջին սեռական հարաբերության ժամանակ: Պատահական զուգընկերների թվի մեդիանան Երևանում և Վանաձորում կազմել է 1 (Երևանում՝ առավելագույնը 19, Վանաձորում՝ 9), Գյումրիում՝ 3 (առավելագույնը՝ 17): Պատահական զուգընկերների հետ սեռական հարաբերությունների թվի մեդիանան կազմել է Երևանում 4 (առավելագույնը՝ 110), Գյումրիում՝ 32 (առավելագույնը՝ 200), և Վանաձորում՝ 3 (առավելագույնը՝ 20): Պատահական զուգընկերոջ հետ երբեք պահպանակ չօգտագործած ԹՆՕ-ների տոկոսն ամենամեծն է եղել Վանաձորում (34%), որին հաջորդում են Երևանը (22%) և Գյումրին (0,8%): Վերջին տարվա ընթացքում պատահական զուգընկերների հետ մշտապես պահպանակ օգտագործել են Երևանի ԹՆՕ-ների 60%-ը, Գյումրիի ԹՆՕ-ների 85%-ը և Վանաձորի ԹՆՕ-ների 61%-ը (աղյուսակ 1.6.):

Աղյուսակ 1.6. Սեռական վարքագիծը պատահական զուգընկերների հետ

	ԵՐԵՎԱՆ N = 300		ԳՅՈՒՄՐԻ N = 150		ՎԱՆԱԶՈՐ N = 150	
	N	% (95% ՎՄ)	N	% (95% ՎՄ)	N	% (95% ՎՄ)
ՍԵՌԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ ՊԱՏԱՀԱԿԱՆ ԶՈՒԳԸՆԿԵՐՈՋ ՀԵՏ ՎԵՐՋԻՆ ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ						
	182	56,5 (49,4, 63,6)	120	83,2 (77,7, 88,8)	91	64,5 (57,6, 71,4)
ՊԱՏԱՀԱԿԱՆ ԶՈՒԳԸՆԿԵՐՈՋ ՀԵՏ ՎԵՐՋԻՆ ՍԵՌԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ ՊԱՀՊԱՆԱԿԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ						
	126	65,5 (55,9, 74,8)	119	99,2 (97,9, 100)	55	62,5 (50,5, 75,0)
ՊԱՀՊԱՆԱԿԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՏԱՀԱԿԱՆ ԶՈՒԳԸՆԿԵՐՆԵՐԻ ՀԵՏ ՎԵՐՋԻՆ ՄԵԿ ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ						
ՄԻՇՏ	114	60,3 (52,1, 68,4)	103	85,1 (77,3, 92,9)		61,0 (51,2, 71,7)
ԵՐԲԵՄՆ	32	17,3 (10,4, 24,2)	16	14,1 (6,9, 21,4)		4,9 (0,4, 9,8)
ԵՐԲԵՔ	36	22,4 (14,5, 30,5)	1	0,8 (0,0, 2,1)		34,1 (23,1 43,8)

Որպես պատահական զուգընկերոջ հետ մշտապես պահպանակ չօգտագործելու պատճառ Երևանում և Վանաձորում մեծամասնության կողմից նշվել է հաճույքի նվազեցումը, իսկ Գյումրիում՝ վստահությունը զուգընկերոջ հանդեպ (գծապատկեր 1.6.):

Գծապատկեր 1.6. Պատահական զուգընկերների հետ մշտապես պահպանակ չօգտագործելու պատճառները



Կոմերցիոն զուգընկերներ

Երևանում ԹՆՕ-ների 49%-ը, Գյումրիում 39%-ը և Կանաձորում 65%-ը նշել են, որ երբևէ ունեցել են սեռական հարաբերություններ կոմերցիոն զուգընկերների հետ (աղյուսակ 1.7.): Կոմերցիոն զուգընկերոջ հետ սեռական հարաբերություն ունեցած ԹՆՕ-ների ավելի քան 90%-ն օգտագործել է պահպանակ այդպիսի զուգընկերոջ հետ վերջին սեռական հարաբերության ժամանակ: Իգական սեռի ԹՆՕ-ների 61%-ը տրամադրել է կոմերցիոն սեռական ծառայություններ:

Աղյուսակ 1.7. Սեռական վարքագիծը կոմերցիոն զուգընկերների հետ

	ԵՐԵՎԱՆ N = 300		ԳՅՈՒՄՐԻ N = 150		ՎԱՆԱՁՈՐ N = 150	
	N	% (95% ՎՄ)	N	% (95% ՎՄ)	N	% (95% ՎՄ)
ԿՈՄԵՐՑԻՈՆ ՍԵՌԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՕԳՏՎԱԾ ԹՆՕ-ՆԵՐԻ ԹԻՎԸ						
	143	48,6 (41,3, 55,9)	56	39,2 (32,0, 46,4)	112	65,5 (56,6, 74,4)
ՎԵՐՋԻՆ ԱՆԳԱՄ ԿՈՄԵՐՑԻՈՆ ՍԵՌԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՕԳՏՎԵԼԻՍ ՊԱՀՊԱՆԱԿԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ						
	125	91,0 (86,8, 95,2)	53	94,3 (90,0, 98,5)	102	91,9 (88,3, 95,8)
ԿՈՄԵՐՑԻՈՆ ՍԵՌԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԱԾՆԵՐ						
	6	60,9 (34,1, 87,1)	-	--	0	--

Ակոհողի և թմրամիջոցների գործածումը

Ակոհողի գործածումը

Փոքրաթիվ ԹՆՕ-ներ են նշել, որ երբեք չեն օգտագործել ալկոհոլային խմիչքներ: Մեծամասնությունը Երևանում ալկոհոլ է օգտագործում ամիսը մեկ անգամ կամ ավելի հազվադեպ, իսկ Գյումրիում ու Վանաձորում՝ ամիսը 2-4 անգամ (աղյուսակ 1.8.): Երևանում ԹՆՕ-ների օգտագործած խմիչքի բաժինների թվի մեղիանան 5 է (առավելագույնը՝ 30), Գյումրիում 4 է (առավելագույնը՝ 6), իսկ Վանաձորում՝ 5 (առավելագույնը՝ 20): Ալկոհոլային խմիչքների վեց կամ ավելի բաժին օգտագործելու հաճախականությունը հիմնականում ամիսը մեկ անգամից քիչ է Երևանում և Վանաձորում, իսկ ամիսը մեկ անգամ՝ Գյումրիում:

Աղյուսակ 1.8. Ալկոհոլի գործածումը

	ԵՐԵՎԱՆ N = 300		ԳՅՈՒՄՐԻ N = 150		ՎԱՆԱՁՈՐ N = 150	
	N	% (95% ՎՄ)	N	% (95% ՎՄ)	N	% (95% ՎՄ)
ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ						
ԵՐԲԵՔ	55	18,7 (13,0, 24,3)	3	2,2 (0,0, 4,5)	6	5,7 (0,4, 11,0)
ԱՄԻՍԸ ՄԵԿ ԱՆԳԱՄ ԿԱՄ ՔԻՉ	86	28,2 (21,3, 35,0)	34	23,1 (16,5, 29,7)	25	19,0 (12,5, 25,3)
ԱՄԻՍԸ 2-4 ԱՆԳԱՄ	57	19,6 (14,1, 25,2)	50	31,1 (24,7, 37,6)	75	46,4 (38,3, 54,5)
ՇԱՐԱԹԸ 2-3 ԱՆԳԱՄ	48	17,2 (11,9, 22,5)	43	29,3 (22,7, 36,0)	38	24,9 (18,5, 31,6)
ՇԱՐԱԹԸ 4 ԿԱՄ ԱՎԵԼԻ ԱՆԳԱՄ	54	16,3 (11,0, 21,6)	20	14,3 (8,9, 19,6)	6	3,8 (1,7, 6,0)
ՎԵՑ ԿԱՄ ԱՎԵԼԻ ԲԱԺԻՆ ԱԼԿՈՀՈԼԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ						
ԵՐԲԵՔ	26	11,4 (6,3, 16,5)	9	6,8 (0,0, 10,8)	2	1,9 (0, 4,4)
ԱՄԻՍԸ ՄԵԿ ԱՆԳԱՄԻՑ ՔԻՉ	91	35,5 (27,5, 43,0)	52	35,4 (28,9, 41,8)	47	40,0 (31,9, 48,7)
ԱՄԻՍԸ ՄԵԿ ԱՆԳԱՄ	32	13,4 (8,1, 18,8)	73	50,3 (43,7, 57,0)	45	27,8 (20,8, 34,5)
ՇԱՐԱԹԸ ՄԵԿ ԱՆԳԱՄ	33	14,1 (8,5, 19,8)	12	6,5 (3,2, 9,8)	28	16,6 (12,2, 20,8)
ԱՄԵՆ ՕՐ ԿԱՄ ՀԱՄԱՐՅԱ ԱՄԵՆ ՕՐ	63	25,7 (18,1, 33,4)	1	0,9 (0,0, 2,4)	21	13,7 (8,5, 18,7)

Թմրամիջոցների գործածումը

Առաջին անգամ թմրամիջոց օգտագործելիս տարիքի մեղիանան եղել է Երևանում 20 (սահմաններ՝ 7-61), Գյումրիում՝ 23 (սահմաններ՝ 17-46), և Վանաձորում՝ 18 (սահ-

մաններ՝ 14-29) (աղյուսակ 1.9.): Բոլոր երեք քաղաքներում ԹՆՕ-ների մեծամասնությունը նշել է, որ առաջին անգամ օգտագործել է կանեփ/ մարիխուանա, իսկ Երևանում 46%-ը նշել է նաև հերոինի օգտագործման մասին, 19%-ն էլ առաջին անգամ օգտագործել է չերնյաշկա: Գյումրիում ԹՆՕ-ների 99%-ը, իսկ Վանաձորում 92%-ը առաջին անգամ օգտագործել են կանեփ/մարիխուանա: Գյումրիում վերջին տարվա ընթացքում ԹՆՕ-ների 91%-ն օգտագործել է կանեփ/ մարիխուանա, 59%-ը՝ ցավազրկողներ, և 97%-ը՝ դեզոմորֆին/բենզին: Վանաձորում վերջին տարվա ընթացքում ԹՆՕ-ների համարյա 90%-ն օգտագործել է կանեփ/մարիխուանա, 60%-ը՝ չերնյաշկա, և 21%-ը՝ մեթադոն: ԹՆՕ-ների մեծ մասն առաջին անգամ թմրամիջոցներ օգտագործել է Հայաստանում:

Աղյուսակ 1.9. Թմրամիջոցների գործածումը

	ԵՐԵՎԱՆ N = 300		ԳՅՈՒՄՐԻ N = 150		ՎԱՆԱԶՈՐ N = 150	
	N	% (95% ՎՄ)	N	% (95% ՎՄ)	N	% (95% ՎՄ)
ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԹՄՐԱՄԻՋՈՅԸ						
ԿԱՆԵՓ/ՄԱՐԻ- ԽՈՒԱՆԱ (ՊԼԱՆ, ԱՆԱՇԱ, ՀԱՇԻՇ)	171	63,3 (56,9, 69,7)	148	99,5 (98,8, 100)	147	92,2 (84,6, 100)
ՏՐԱՆԿՎԻԼԻԶԱ- ՏՈՐՆԵՐ ԿԱՄ ՍԵԴԱ- ՏԻՎ ՄԻՋՈՑՆԵՐ (ԴԻԱԶԵՊԱՄ, ՎԱԼԻՈՒՄ, ՍԵԴՈՒՔ- ՍԵՆ, ՏՐԱՆԿՎԻՆ, ԼՈՐԱԶԵՊԱՄ, ՏԱԶԵՊԱՄ, ՕՔՍԱԶԵՊԱՄ)	2	0,6 (0,0, 1,7)	1	0,5 (0,0, 1,2)	0	--
ԷՔՍԱԶԻ	0	--	0	--	0	--
ՑՆԴՈՂ ՆՅՈՒԹԵՐ (ՍՈՍԻՆՁ, ԱՅԵՏՈՆ)	0	--	0	--	0	--
ԱՄՖԵՏԱՄԻՆՆԵՐ	2	1,6 (0,0, 3,9)	0	--	0	--
ԿՈԱՔՍԻԼ	0	--	0	--	1	2,6 (0, 6,0)
ՀԵՐՈԻՆ	21	46,3 (2,4, 6,8)	0	--	1	2,6 (0, 7,5)
ՄԵԹԱԴՈՆ	1	0,3 (0,0, 0,8)	0	--	0	--
ԿՈԿԱԻՆ	1	0,1 (0,0, 0,3)	0	--	0	--
ՉԵՐՆՅԱՇԿԱ	64	18,7 (13,3, 24,0)	0	--	1	2,6 (0, 7,8)
ԴԵՂՈՄՈՐՖԻՆ (ԲԵՆԶԻՆ)	7	2,1 (0,5, 3,7)	0	--	0	--
ՑԱՎԱԶՐԿՈՂՆԵՐ	1	0,4 (0,0, 1,4)	0	--	0	--
ՄՈՐՖԻՆ	12	3,4 (1,2, 5,6)	0	--	0	--

	ԵՐԵՎԱՆ N = 300		ԳՅՈՒՄՐԻ N = 150		ՎԱՆԱՁՈՐ N = 150	
	N	% (95% ՎՄ)	N	% (95% ՎՄ)	N	% (95% ՎՄ)
Օղիո՞ւմ	5	2,4 (0,3, 4,5)	0	--	0	--
Պրոսեդուր	3	1,8 (0,0, 3,9)	0	--	0	--
Սոփիստիկ	3	0,5 (0,0, 1,1)	0	--	0	--
ՎԵՐՋԻՆ ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԹՄՐԱՄԻՋՈՑԸ						
ԿԱՆԵՓ/ՄԱՐԻ-ԽՈՒԱՆԱ (ՊԼԱՆ, ԱՆԱՇԱ, ՀԱՇԻՇ)	44	16,2 (10,8, 21,5)	136	90,6 (86,4, 94,8)	144	89,8 (82,7, 97,6)
ՏՐԱՆԿՎԻԼԻԶԱՏՈՐՆԵՐ ԿԱՄ ՍԵԴԱՏԻՎ ՄԻՋՈՑՆԵՐ (ԴԻԱՋԵՊԱՄ, ՎԱԼԻՈՒՄ, ՍԵԴՈՒՔՍԵՆ, ՏՐԱՆԿՎԻՆ, ԼՈՐԱՋԵՊԱՄ, ՏԱՋԵՊԱՄ, ՕՔՍԱՋԵՊԱՄ)	15	4,4 (1,8, 7,1)	55	37,9 (31,1, 44,7)	0	--
ԷՔՍԱՋԻ	0	--	0	--	0	--
ՅՆԴՈՂ ՆՅՈՒԹԵՐ (ՍՈՍԻՆՁ, ԱՅԵՏՈՆ)	0	--	0	--	11	10,2 (3,8, 16,8)
ԱՄՖԵՏԱՄԻՆՆԵՐ	6	1,3 (0,1, 2,5)	0	--	0	--
ԿՈԱՔՍԻԼ	2	0,1 (0,0, 0,2)	3	2,0 (0,1, 4,0)	4	4,2 (0, 9,1)
ՀԵՐՈԻՆ	46	15,3 (10,3, 20,3)	3	2,2 (0,1, 4,4)	2	1,5 (0, 3,1)
ՄԵԹԱԴՈՆ	19	5,2 (2,5, 7,9)	0	--	26	20,9 (13,3, 28,3)
ԿՈԿԱԻՆ	14	3,0 (1,2, 4,8)	1	0,9 (0,0, 2,2)	0	--
ՉԵՐՆՅԱՇԿԱ	145	45,5 (38,7, 52,4)	21	14,6 (8,6, 20,6)	90	60,4 (53,2, 68,0)
ԴԵՂՈՄՈՐՖԻՆ (ԲԵՆՁԻՆ)	150	49,1 (41,8, 56,3)	146	96,6 (94,5, 98,8)	140	90,0 (83,3, 96,4)
ՑԱՎԱՋՐԿՈՂՆԵՐ	8	2,8 (0,8, 4,8)	88	59,0 (50,7, 67,3)	20	10,9 (6,4, 15,5)
ՍՈՒՔԻՏԵՔՍ	43	15,8 (9,8, 21,7)	0	--	0	--
ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ ԹՄՐԱՄԻՋՈՑ ԳՈՐԾԱԾԵԼՈՒ ՎԱՅՐԸ/ԵՐԿԻՐԸ						
ՀԱՅԱՍՏԱՆ	229	74,5 (68,2, 80,9)	113	76,9 (71,1, 82,8)	68	44,1 (36,3, 52,0)
ՌՈՒՍԱՍՏԱՆ	51	20,4 (14,4, 26,3)	25	16,0 (10,9, 21,2)	77	53,2 (45,3, 60,9)
ՈՒԿՐԱԻՆԱ	3	1,4 (0,0, 3,3)	7	4,3 (1,6, 7,0)	5	2,8 (1,2, 4,4)
ԱՅԼ	17	3,7 (1,8, 5,6)	4	2,7 (0,3, 5,2)		--

Ներարկային ճանապարհով թմրամիջոցների գործածումը

Տարիքի մեղիանան առաջին անգամ ներարկային ճանապարհով թմրամիջոց օգտագործելիս Երևանում եղել է 22,5 (սահմաններ՝ 14-61), Գյումրիում՝ 35,5 (սահմաններ՝ 18-51), և Վանաձորում՝ 18 (սահմաններ՝ 14-29): Երևանի և Գյումրիի ԹՆՕ-ների մեծ մասը ներարկային ճանապարհով թմրամիջոցներ առաջին անգամ գործածել է ՀՀ-ում,


իսկ Վանաձորի ԹՆՕ-ների մեծ մասն առաջին անգամ ներարկային թմրամիջոցներ գործածել է ՌԴ-ում (աղյուսակ 1.10.): Վերջին երեք ամիսների ընթացքում բոլոր երեք քաղաքներում ԹՆՕ-ների կողմից ամենից հաճախ ներարկային ճանապարհով գործածված թմրամիջոցը եղել է դեզոմորֆինը: Վերջին ամսվա ընթացքում ներարկային ճանապարհով թմրամիջոցներ են գործածել Երևանում ԹՆՕ-ների 87%-ը, Վանաձորում՝ 96%-ը, Գյումրիում՝ բոլորը: Ընդ որում թմրամիջոցների ներարկման մեղիանան Երևանում եղել է 10 (առավելագույնը՝ 150), Գյումրիում՝ 2 (առավելագույնը՝ 4), և Վանաձորում՝ 7 (առավելագույնը՝ 30):

Աղյուսակ 1.10. Ներարկային թմրամիջոցների գործածումը

	ԵՐԵՎԱՆ N = 300		ԳՅՈՒՄՐԻ N = 150		ՎԱՆԱԶՈՐ N = 150	
	N	% (95% ՎՄ)	N	% (95% ՎՄ)	N	% (95% ՎՄ)
ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ ՆԵՐԱՐԿԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՈՎ ԹՄՐԱՄԻՋՈՑ ԳՈՐԾԱԾԵԼՈՒ ՎԱՅՐԸ/ԵՐԿԻՐԸ						
ՀԱՅԱՍՏԱՆ	210	72,5 (66,3, 78,8)	97	66,1 (59,7, 72,6)	68	44,1 (36,6, 51,7)
ՌՈՒՍԱՍՏԱՆ	60	20,2 (14,4, 25,8)	40	25,8 (19,8, 31,7)	77	53,2 (45,6, 60,6)
ՈՒԿՐԱԻՆԱ	11	3,2 (1,1, 5,2)	13	8,1 (4,3, 11,8)	5	2,7 (1,0, 4,5)
ԱՅԼ	18	4,1 (1,9, 6,4)	0	--	0	--
ՎԵՐՋԻՆ 3 ԱՄՍՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՌԱՎԵԼ ՀԱՃԱԽ ՆԵՐԱՐԿՎԱԾ ԹՄՐԱՄԻՋՈՑՆԵՐԸ						
ՀԵՐՈԻՆ	22	7,9 (3,2, 12,6)	0	--	0	--
ՉԵՐՆՅԱՇԿԱ	119	37,1 (30,0, 44,1)	15	11,0 (6,3, 15,7)	49	36,0 (28,1, 43,8)
ԴԵՂՈՄՈՐՖԻՆ (ԲԵՆԶԻՆ)	159	51,3 (44,4, 58,2)	149	99,1 (98,9, 99,3)	140	93,5 (88,2, 99,0)
ՍՈՒՔՈՒՏԵՔՍ	37	13,7 (7,5, 20,0)	0	--	0	--
ԿՐԻՍՏԱԼ	6	1,8 (0,3, 3,2)	0	--	0	--
ԹՄՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՆԵՐԱՐԿՈՒՄԸ ՎԵՐՋԻՆ 1 ԱՄՍՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ						
	266	87,5 (82,8, 92,2)	150	100	147	95,7 (91,0, 100)

ԹՆՕ-ների մեծամասնությունը բոլոր երեք տեղամասերում նշել է, որ առաջին անգամ թմրամիջոց ներարկելիս օգտագործել է չերնյաշկա (զճապատկեր 1.7.):

Գծապատկեր 1.7. Առաջին անգամ ներարկված թմրամիջոցի տեսակը



Թմրամիջոցների ներարկմանն առնչվող վարքագիծը

Վերջին ամսվա ընթացքում թմրամիջոցներ գործածած ԹՆՕ-ների 60%-ը Երևանում, 50%-ը Գյումրիում և 7%-ը Վանաձորում օգտագործել են ընդհանուր ներարկման պարագաներ (աղյուսակ 1.11.): ԹՆՕ-ների մեծամասնությունը սովորաբար օգտագործում է ընդհանուր ներարկման պարագաներ 2-5 այլ ԹՆՕ-ների հետ, ընդ որում ներարկման պարագաների համատեղ օգտագործման թվի մեղիանան կազմել է Երևանում՝ 2 (առավելագույնը՝ 10), Գյումրիում՝ 3 (առավելագույնը՝ 5), և Վանաձորում՝ 3 (առավելագույնը՝ 14): Երևանի ԹՆՕ-ների 44%-ը, Վանաձորի ԹՆՕ-ների 89%-ը և Գյումրիի ԹՆՕ-ների 39%-ը նշել են, որ մեկ ամսվա ընթացքում ընդհանուր ներարկման պարագաներից օգտվել են 2-5 անգամ: Հարցման ենթարկված ԹՆՕ-ների 88%-ը և ավելին յուրաքանչյուր ներարկման ժամանակ մշտապես օգտագործում է նոր միանվագ ներարկիչ: Նմանապես ԹՆՕ-ների մեծամասնությունը Երևանում և բոլորը Վանաձորում օգտագործել են մանրէազերծ ասեղ և ներարկիչ վերջին ներարկման ժամանակ, իսկ Գյումրիում՝ ընդամենը 35%-ը: Երևանում ոչ մշտապես նոր միանվագ ներարկիչներ օգտագործող ԹՆՕ-ների 76%-ը վերջին անգամ թմրամիջոց ներարկելիս

օգտագործել է մանրէագերծ ասեղ և ներարկիչ, 48%-ը երբեմն «ախտահանել» է ասեղները և ներարկիչները եռացնելու միջոցով:

Աղյուսակ 1.11. *Ներարկային ճանապարհով թմրամիջոցների գործածումը*

	ԵՐԵՎԱՆ N = 300		ԳՅՈՒՄՐԻ N = 150		ՎԱՆԱՁՈՐ N = 150	
	N	% (95% ՎՄ)	N	% (95% ՎՄ)	N	% (95% ՎՄ)
ՎԵՐՋԻՆ ՄԵԿ ԱՄՍՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԵՐԱՐԿՄԱՆ ՊԱՐԱԳԱՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ						
	183	60,2 (52,3, 67,9)	70	49,8 (42,8, 56,8)	4	7,0 (0, 14,2)
ՄԱՐԴԿԱՆՑ ԹԻՎԸ, ՈՐՈՆՑ ՀԵՏ ՄԵԿ ԱՄՍՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀԱՄԱՏԵՂ ԳՈՐԾԱԾՎԵԼ ԵՆ ՆԵՐԱՐԿԱՅԻՆ ԹՄՐԱՄԻՋՈՑՆԵՐ						
1	6	3,0 (0,01, 6,0)	7	5,1 (2,0, 8,1)	3	2,5 (0,1, 5,3)
